

## ԿՐՈՆԱԿԱՆ

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔԱՎ

Ա.

Պատոր Հենրի Մէկսուէլը սաստիկ անհանդիստ էր։ Արդէն ուրբաթ էր, իսկ նա կիրակի օրուայ քարոզի գեռ կէսն անդամ չէր պատրաստել։ Ամբողջ շաբաթն այլ և այլ գործով կամ խնդրով գիմողները թոյլ չէին տուել նրան կենդրոնանալու։ Վերջապէս Մէկսուէլը վճռեց այլ ևս ոչ ոքի շընդունել, մինչեւ բոլորովին պատրաստի առաջիկայ կիւրակէի քարոզը։

Նա առանձնացաւ իւր գրասենեակը, գուռը փակեց և սկսեց մտածել՝ սենեակում անց ու դարձ անելով։ Նա քարոզի նիւթ էր ընարել Պետրոս առաքեալի կաթուղիւկայց թղթից հետևեալ բնաբանը. «Ի՞նչ մի առաւելութիւն է, եթէ համբերում էք, երբ ձեզ ձեր գործած յանցանքի համար տանջում են։ Իսկ եթէ բարի գործելու պատճառով էք պատժում ու համբերում, այդ է հաճելի Աստուծուն։ Որովհետև հէնց այդ կերպ ընթանալու համար էլ կոչուած էք. Քրիստոս ձեզ համար մեռաւ և օրինակ տուեց ձեզ, որ գնաք նորա հետքով։ (Ա. Պետրոս, Բ. 20—21)։

Մէկսուէլն իւր քարոզի մէջ այն միտքն էր արծարածում, թէ Յիսուս միայն խաչի վրայ չտանջուեց. այլ նրա ամբողջ կեանքը, Աստուծոյ արքայութեան քարոզութիւնը լի էր տանջանքով և հաւատացող քրիստոնեան՝ մարդկանց մէջ յանուն Աստուծոյ արքայութեան գործելով պարտաւոր է հետեւելու Փրկչի տուած օրինակին։ Քրիստոսի աշակերտի համար արդարութեան ծառայելու ճանապարհը անխուսափելի կերպով կը լինի նաև խաչի ճանապարհ։ Մարդկութեան համար Աստուծոյ Որդու զո-

Հուիլը մեզնից ևս դոհ է պահանջում Աստուծոյ գործի համար:

Մէկսուէլը հասել էր արդէն քարոզի վերջին մասին և կամենում էր ցոյց տալ Քրիստոսին հետեւլու եղանակներն ու կարգով թուել մի առ մի, երբ յանկարծ դռան զանգը խփեցին:

Մէկսուէլը մօտեցաւ լուսամուտին տեսնելու թէ ով է: Դուան մօտ կանգնած էր միջին տարիքի մի մարդ. հագուստը հասարակ, դէմքը հիւանդու:

— Ի՞նչ էք կամենում, հարցրեց Մէկսուէլը:

— Ես կուզէի տեսնել պաստորին:

— Պաստորը ես եմ:

— Ես գործ եմ փնտռում, շփոթուած ասաց խեղճ մարդը՝ գլխարկը վերցնելով, և կարծում եմ, թէ դոք կարող էք ինձ օգնել մի գործ ճարելու:

— Յաւօք որտի ոչինչ չեմ կարող անել ձեզ համար, ասաց Մէկսուէլը: Այժմ առհասարակ դժուարութեամբ է գործ գտնելու:

— Դիտեմ, համաձայնեց խնդրովը, բայց ես ամբողջ շաբաթն առանց հացի եմ մնացել: Շնորհ արէք խնդրեմ, եթէ կարելի է, մի յանձնարարական տալու երկաթուղու վարչութեան անունով կամ մի այլ տեղի համար: Ես ծայրայեղ կարիքի ու յուսահատութեան մէջ եմ: Հգիտեմ թէ ինչ անեմ, շարունակեց խեղճը՝ կեղաստ գլխարկը ձեռքին պտտեցնելով:

— Դժուար թէ իմ տոմսակն օգնի ձեզ տեղ գտնելու, ասաց պաստորը, և հիմա էլ սաստիկ զբաղուած եմ: Ներեցէք ինձ, քարոզ եմ պատրաստում կիրակի օրուայ համար: Էլի փնտռեցէք: յոյս ունեմ, որ մի գործ կը գտնէք ձեզ համար:

Պաստորը փակեց լուսամուտը, իսկ բանւորը հեռացաւ, մոռանալով նոյն իսկ գլխարկը ծածկել: Նրա խղճալի կերպարանքը ծայրայեղ կարիք ու զրկանք էր արտայայտում: Պաստորը մի բոպէ մնաց կանգնած, ապա մօտեցաւ սեղանին և հառաչելով շարունակեց պատրաստել

**Ընդհատուած քարոզը:**

Այլ ևս նրան խանդարող չեղաւ, և երեկոյեան քարոզն արգէն պատրաստ էր: Մնում էր միայն մի լաւ սերտել, իսկ գրա համար դեռ մի ամբողջ օր կար:

Այդ կերտեկի Ռայմոնդում եղանակը հրաշալի էր: Ժողովուրդը խմբերով եկեղեցի էր գնում, երբ ժամը 11-ին ժամերգութիւնը սկսեց, եկեղեցու ընդարձակ շինութիւնը արգէն լցուած էր Ռայմոնդի ընտիր և ունեւոր հասարակութեամբ: Այդ եկեղեցին, որի քահանան էր Մէկսուէլը, յայտնի էր իւր երգեհոնով, գեղեցիկ քարոզ ներով և հրաշալի երգեցիկ խմբով: Այդ օրը սաղմոսներն ու աղօթքները համաձայնեցրած էին քարոզի բովանդակութեամբ: Յայտնի երգչուհի Հռաքէլ Վինոլու քարոզից անմիջապէս առաջ երգեց հետեւեալ յուղիչ երգը:

«Քեզ հետեւելով և ես կը վերցնեմ իմ խաչը, ո՛վ Փրկեց, որ դնամ ու տանում է քո ճանապարհը, թողնելով ամեն ինչ»:

Հռաքէլի ձայնը հնչում էր արծաթի պէս, և նրա երգը աւելի տրամադրեց ունկնդիրներին քարոզ լոելու: Հենրի Մէկսուէլը բարձրացաւ ամբիոն Եկեղեցում լուսաթիւն տիրեց: Ռայմոնդի մայր եկեղեցու ծխականները սիրում էին իրենց պաստորի քարոզը: Նա խօսում էր եռանդով, խելացի և գեղեցիկ, ունի հնչուն ձայն և սիրուն ձեւը: Ինչպէս միշտ, նոյնպէս և այդ օրը Մէկսուէլի քարոզն աշխատժով լի և հետաքրքրական էր: Ունկնդիրները հետեւում էն պաստորի քարոզին խորին ուշադրութեամբ: Յանկարծ ամենքի ուշադրութիւնը մի այլ կողմ գարձաւ: Հազիւ Մէկսուէլը վերջացրել էր իւր քարոզը և գեռ ամբիոնից չէր իջել, երբ յետին շարքերից մի ձայն լսուեց և, մինչ ժամաւորները կը հասկանային թէ ովէ և ինչ է ասում, խօսողը մօտեցաւ ամբիոնին ու գարձաւ դէպի ժողովուրդը:

— Ներեցէք, ասաց նա, ես հարթած չեմ և ոչ էլ խելագար: Ես մի խեղճ և անվաս մարդ եմ, անգործ

մնացած մի հասարակ բանուոր, իմ դրութիւնը շատ ծանր է: Ես մտայ եկեղեցի աղօթելու և ամբողջ ժամանակ, որ կանգնած եմ եկեղեցում, շարունակ զարմանում էի այստեղ տեսածներիս ու լսածներիս վրայ: Ես զգում եմ, որ այլիս այս աշխարհի բնակիչ չեմ, և որ իմ օրերը հաշուած են. ուստի ցանկանում եմ իմանալ ինչ է նշանակում այստեղ լսածս կոչը. գոնանք Քրիստոսի յետելից և Նրա հետքով:

Հենրի Մէկոուէլը ցնցուեց: Խօսողն այն մարդն էր, որ ուրբաթ առաւոտեան եկել էր իւր մօտ, և այժմ ցնցոտիներով ծածկուած թափառաշըջիկի տեսքով այդ մարդը կանգնած էր նրա առաջ որպէս մի կենդանի յանդիմանութիւն:

Շփոթուած Մէկոուէլը չգիտէր ինչ անէր. իսկ բանուորը, կարծես, չնկատելով իւր արտասովոր վարմունքի չնորհիւ առաջ եկած շփոթութիւնը, շարունակում էր խօսել.

— Ամբողջ Ամերիկայում զանազան արդիւնաբերական ընկերութիւնների և գործարանների մէջ կռիւ է մղւում: Մեծ դրամատէրերը կազմել են ահագին դրամագլուխ ունեցող ընկերութիւններ, որպէս զի ճնշեն մասնաւոր ձեռնարկողներին, և ապրանքների գները սաստիկ իջեցրել են, որի պատճառով փոքրիկ գործարաններից շատերը ստիպուած գաղարեցրել են իրենց աշխատանքը: Հաղարաւոր բանուորներ մնացել են առանց հացի: Ես ևս, լինելով այդ բազմաթիւ թշուառներից մէկը, ամբողջ ամառն ու աշունը մնացել եմ պարապ: Ես կին ու երկու երեխայ ունէի: Ծծկերը մեռաւ հէնց այն ժամանակ, երբ ես նոր էի գործից զրկուել. բժիշկն ասում էր, թէ պատճառը մօր վատ սնունդ ստանալին էր. ինչ վատ սնունդ... Յաճախ տանն օրերով հաց չէր գտնուում: Եւ չէ որ ես մենակ չեմ, շատերն են իմ դրութեան մէջ: Ես չեմ դանդառուում, չեմ տրտնջում: Ոչ, ես ասում եմ միմի այն ինչ որ եղել է: Այնտեղ յետեռում նստած, ձեր երգեցողութիւնն ու պաստորի քարոզը լսելով, ես մտածում

էի, թէ նրբան է համապատասխանում մեր կեանքին այն, ինչ որ գուք «Քրիստոսին հետեւել» էք անուանում, ինչ էր ուղում ասել Փրկիչը «Եկեղ իմ յետեւից խօսքերով»:

Պաստորն ասում էր, թէ Քրիստոսի աշակերտն անպատճառ պէտք է զնայ նրա հետքով և թւում էր մի առ մի այդ միջոցները. խոնարհութիւն, հաւատ, սէր և անձնուրացութիւն: Ի՞նչպէս են հասկանում քրիստոնեաները «Փրկչի շաւզով ընթանալը»-ը, Արդեօք գուք ուրանում էք ձեր անձը և առնում էք ձեր վրայ ամբողջ մարդկութեան տանջանքը, ինչպէս որ այդ արաւ մարդկութեան Փրկիչը: Ես նոր եմ եկել այստեղ գործ գտնելու: Դուք ձեր մէջ ունիք հինգ հարիւրից աւելի ինձ նման անգործ մնացած իւղին բանուորներ, շատերն ընտանիքի տէր: Ասացէք խնդրեմ, ինչ են նշանակում ուրեմն ձեր խօսքերը. «Ո՞վ Յիսուս Փրկիչ, ես առնում եմ իմ խաչը, որպէս զի, ամեն ինչ թողած, գամ Քո յետեւից»:

Փրկիչն անապատում կերակրեց քաղցեալներին: Ի՞նչպէս է որ, ձեր մէջ՝ հացի, մսի, բանջարեղինի ու մրգեղինի առատութիւն լինելով հանդերձ, սովամահ են լինում ձեր եղբայրները: Երկու ամիս առաջ մեռաւ իմ խեղճ կինը: Մեղ ընակարանից գուրս արին վարձ չվճարելու պատճառով, իսկ տանտէրը չէ որ նոյնպէս քրիստոնեայ էր: Ասացէք, միթէ Քրիստոս դուրս կանէր իւր ընակարանից անդամներին: Մեր երեխայի հետ երկու օր գիշեր-ցերէկ թափառում էինք գուրսն անձրեսի տակ, մինչեւ որ մեզ մի ընկեր-բանուար իւր տան մէջ պատըսպարեց: Կինս հիւանդացաւ և երեք օրից յետոյ մեռաւ: Աղջիկս մնաց ընկերիս մօտ, իսկ ես այժմ մեռնելու վրայ եմ: Կրկնում եմ, ես չեմ յանդիմանում ձեղ, ոչ ոքի չեմ մեղադրում: Ես հասկանում եմ, որ գուք չէք կարող ոչնչացնել կարիքը, սովը, խեղդող նկուղները. բայց ասացէք ինձ, ի սէր Աստուծոյ, ի՞նչն էք գուք «Քրիստոսին հետեւել» անուանում: Ես լսեցի, թէ ինչպէս գուք երագում էիք այստեղ.

«Ամեն բան Յիսուսի համար, ամեն ինչ նրա համար,  
նրա միջոցով փրկագործուած իմ ամբողջ էութիւնը,  
իմ ըոլոր մտածմունքներն ու գործերը,  
իմ կեանքի ըոլոր օքերն ու ժամերը,  
Ամեն ինչ նրա՝ աշխարհի Փրկչի համար»:

Ես ես, յետիում ամոռի վրայ նստած, կրկին մտած  
մունքների մէջ ընկայ, թէ ինչ էք հասկանում դուք այդ  
ասելով, ինձ թւում է թէ երկիրը կը դադարէր թշուառ  
ութեան վայր լինել, եթէ որ այդպիսի օրհներգները երա  
զող մարդիկ նոյն խօսքերը կեանքի մէջ գործ դարձնէինք  
իսկ եթէ օրհներգի և քարոզի խօսքերը չեն իրազործ  
ւում, էլ ինչի է պէտք երգել կամ խօսել Ո՞ւմն ենք  
խաբում մենք, մեզ, միմեանց, թէ Աստուծուն, Գուցէ  
ես սխալւում եմ, սակայն հաւատում եմ, որ եթէ ինձ  
մոտ, իրենց քրիստոնեայ անուանող մարդոց փոխարէն,  
ինքը Քրիստոոը լինէր, իմ կինն ու երեխաները այսպէս  
վաղաժամ գերեզման չէին իջնիլ և ես այժմ չէի նա-  
խանձիլ նրանց խաղաղ անդորրութեանը, Բացատրեցէք  
ինձ, եթէ կարող էք, մեր կեանքին տիրազ հակասութիւնը,  
թեթևացրէք քրիստոնէաբար իմ տանջուած հոգին, Այդ  
ամենը անցել գնացել է, գուցէ հէնց այդպէս էլ պէտք է  
լինէր, սակայն ես չեմ հասկանում ձեր արած խոստումը  
Քրիստոսին հետևելու, Նրա հետքով ընթանալու, ես  
խնդրում եմ . . .

Խօսողը չվերջացրեց, նա ձեռքը ճակատին դրեց ու  
յանկարծակի երեսի վրայ վայր ընկաւ:

Հենրի Մէկսուէլը իջաւ ամբիոնից և մօտենալով գետին  
փռուած մարդուն, ընկաւ ծնկների վրայ, եկեղեցում  
բժիշկ և կար. նա մօտեցաւ, ականջ դրաւ որտին և  
տաց, խեղճը գեռ կենդանի է, բայց միայն ուշագնաց է  
եղել Հիւանդին տարան պատորի տունը:

Այդ օրուանից Հենրի Մէկսուէլի կեանքում մի նոր  
շրջան սկսուեց, սակայն դեռ ոչ ոք և հէնց ինքը պատ-  
որը չէր կարող կարծել, թէ այդ գէպը այնքան մեծ  
աղդեցութիւն պէտք է անէր նրա աշխարհահայեցըի,

համոզումների և նոյն իսկ կեանքի եղանակի վրայ,

Փամաւորները ցրուեցին լուռ և մտախոհ։ Այդ դէպ-  
քը ամենքի վերայ զօրեղ տպաւորութիւն դործեց։ Ամբողջ  
շաբաթուայ ընթացքում ծխականների մէջ շարունակ հի-  
ւանդ բանուորի մասին էր խօսուում, որի գրութիւնը,  
բժշկի ասելով, հետզետէ ծանրանում էր։

Մէկսուէլն ու իւր կինը միտախին ամեն քնքշութեամբ  
խնամում էին հիւանդին։ Նրանք մի ժամ անդամ չէին  
հեռանում հիւանդի մօտից գիշեր-ցերեկ։ սակայն հիւ-  
անդի գրութիւնն օր օրի վրայ ծանրանում էր, երբեմն  
նա մոռացութեան մէջ էր ընկնում և կանչում էր իւր  
աղջկան, որին թողել էր իւր բանուոր ընկերոջ մօտ։ Հե-  
ռագրով կանչեցին աղջկան, և շաբաթուայ վերջին նա  
արդէն հօր անկրնու մօտ էր։ Հիւանդը քնքոյշ սիրով  
բռնեց աղջկայ ձեռքը և շնորհակալութեան արցունքն աշ-  
քերին ասաց պաստորին։

— Ես գիտեմ, որ շուտով պէտք է մեռնեմ, բայց  
այժմ այդ ինձ չի սարսափեցնում այլեւու ես հանդիսա-  
եմ աղջկանս և իմ մասին։ Աղջիկս չի կորչիլ ձեզ մօտ,  
գուք նրան կը խնամէք։ իսկ ես այժմ թեթև եմ զզում  
ինձ։ Ես տեսնում եմ, որ երկրի վրայ այնուամենայնիւ  
քրիստոնէական սէր գոյութիւն ունի։ Դուք դէպի ինձ  
բարի, չափազանց բարի եղաք։ Ես զգում եմ, որ Յիսուս  
նոյն կերպ կը վարուէր։ Զեր օրինակից ես համոզուեցի,  
որ եթէ մարդիկ ուղենային, կարող էին ամեն ժամանակ  
և ամեն դէպօւմ հետեւ Քրիստոսին, գնալ նրա հետքով։

Հիւանդը գծուարութեամբ էր խօսում։ Նրա շունչը  
կորում էր, վախճանը մօտ էր։

— Թանկազին պաստոր, շարունակեց հիւանդը՝ բռնե-  
լով նրա ձեռքը, ախ, եթէ իմանայիք որքան հեշտ է մեռ-  
նելը հաւատալով Քրիստոսին, նրա սիրոյ ու արդարութեան  
ուժին երկրի վրայ... Ասացէք նրանց, որոնց ես խօսեցի  
եկեղեցում... Հրաւիրեցէք նրանց դէպի Քրիստոս... գնա-  
ցէք Քրիստոսի յետեից... կոչեցէք ուրիշներին նրա հետ-  
քով ընթանալու... Միմիայն այդ կերպ ընթանալով մար-

դիկ կարող են եղբայրներ լինել... միմիայն այդպիսով կարելի է հսկու անդարձութիւն գտնել... կեանքի ուրախութիւն...

Հիւանդը ցնցուեց, ձգուեց, աչքերը դարձրեց դէպի սենեակում կախուած խաչելութեան պատկերը և խաղաղ սրտով ննջեց յաւիտեան։ Պաստորը ծունկ չոքեց և երկար աղօթում էր։ Նա վերջին շաբաթուայ ընթացքում՝ նկատելի կերպով փախուել էր, նրա դէմքը աւելի մտած կոտ արտայայտութիւն էր ստացել, աչքերից նկատում էր, որ նրա միտքը մի ինչ որ խնդրով խորապէս զբաղուած էր։

Հիւանդը մեռաւ կիրակի լուսաբացին։ Գեղեցիկ առաւօտ էր Մէկսուէլը՝ նայում էր լուսամուտից և ծագող արել դիտելով, շրջապատող ընութեան հետ, նրա հոգին ևս սկսում էր հետզհետէ աւելի ու աւելի լուսաւորուել։

Քնիր խաղաղութեամբ, հանգուցեալ եղբայր իմ, ասաց Մէկսուէլը՝ նայելով ննջեցեալին։ Քո մահը մեղ՝ կենդանի մնացածներիս համար զարկ էր լինի յարութիւն առնելու, հոգով վերածնուելու։ Անկարելի է, որ քո վերջին խօսքերն ու մահը անհետեանք անցնեն մեղ համար։ Քո տանջանքները, ինչպէս և հազարաւոր քեղ նման խեղճերինը, ներկայանում են որպէս զօրեղ յանդիմանութիւն մեր քրիստոնէական խղճին։ Մենք առաջ չէինք մտածում այդ տանջանքների մասին, աչքելնիս փակում էինք նրանց առաջ, ականջ ունէինք և չէինք լսում, աչք ունէինք և չէինք տեսնում։ Այժմ մեր աչքերի կապանքը վայր ընկաւ։ Աղքատութիւնից ու սովից առաջացած քո մահը մեր հոգեոր աղքատութեան ահեղ դատապարտութիւնն է։ Զէ որ քրիստոնէութիւնը խօսքի մէջ չէ, այլ գործի, Քրիստոսի վարդապետութեան համեմատ վարած կեանքի մէջ։ Մենք շատ օրհներգներ ենք երգում Քրիստոսին, սակայն իսկական օրհներգը նրա համար մեր կեանքն է, նորա սիրով լցուած։ Դու մեղ բարի դաս տուիր, մենք այդ չենք մոռանայ... գոնէ ես, հաստատ վճռազականութեամբ վերջացրեց Մէկսուէլը։

Այդէն եկեղեցի գնալու ժամանակ էր։ Այդ կիրակի ժամաւորսերը սովորականից շատ աւելի էին։ Ամենքն էլ կարծես զգում էին, որ այդ օրը սովորական ժամերգում թիւնից զատ մի ինչ որ առանձին բան ևս պէտք է կատարուէր։

### Հասաւ քարոզի ժամանակը։

Այդ օրուայ քարոզը սովորականի նման չէր։ Ոչ ոք չէր յիշում, որ պատորը խօսած լինէր առանց դրածը աչքի առաջ ունենալու, Վաղուց էր, որ նա սովորութիւն էր դարձրել առաջուց գրելու իւր քարոզը։ Այս անգամ նա խօսում էր առանց ձեռքին թուղթ ունենալու և նկատելի կերպով յուղուած։ Երեսում էր, որ ուղում էր մի ինչ որ միտք պարզել, բայց չգիտէր ինչ ձեռվ արտայայտէր։ Քարոզի վերջում նա ծածկեց Աստուածաշունչը և հայեացը ժողովրդին դարձնելով սկսեց խօսել մի շաբաթ առաջ պատահած զարմանալի դէպքի մասին։

— Մեր եղբայրը, ասաց նա, այսօր առաւօտեան փոխուեցաւ առ Աստուած։ Նրա մահը, մահից առաջ խօսածները, ինչպէս նաև անցեալ կիրակի նրա այստեղ երեւալն ու խօսելը ինձ վրայ մի արտասովոր տպաւորութիւն արին։ Նրանք ինձ դրդեցին լուրջ մտածելու այն հարցի մասին, որով առաջ երբէք չէի զբաղուել։ «ինչ է նշանակում գնալ Քրիստոսի յետեից»։ Ես կարծում եմ, որ այն մարդու խօսքերը մեզ նախատինք բերող դառն ճշմարտութիւններ էին, և որ մենք կամ պէտք է փորձենք պատասխանել նրա տուած հարցերին կամ իրբե Քրիստոսի աշակերտներ դատապարտութիւն ընդունենք, որովհետեւ խօսում ենք Քրիստոսին հետեւելու մասին, իսկ գործում հակառակ նրա կամքի և վարդապետութեան։ Ամբողջ շաբաթն ես մտածում էի այդ խնդրի մասին և վճռեցի ձեղ ևս հաղորդակից անել իմ մտքերին, որոնք կարող են անցեալ կիրակի այստեղ խօսուածի պատասխանը լինել։

Հենրի Մէկսուէլը լուեց և իւր ծխականների երեսին նայեց։ Նրա առաջ կային լուրջ և խիստ դէմքեր։ Այդառեղ էին՝ Ռայմոնդի «Թրուայ նորութիւնների հրատարա-

կիչ եղուարդ նորման, երկաթուղային արհեստանոցների գլխաւոր կառավարիչ Ալեքսանդր Պառէէր, Կինկոնեան դպրոցի տեսուչ Մարտ Դոնայլդ, յայտնի նկարիչ Վիլիամ Գոբսոն, Դրոնցից յետոյ նստած էին նշանաւոր փաստաբան Ռիչարդ Ստոկս, թատրոնի տեսուչ Օլիվեր Կոուլ և Ռայմոնդի յայտնի գաճառական Միլտոն Ռայտ: Ռյդտեղ էին նոյնպէս՝ երիտասարդ, բայց արդէն մեծ հոչակ ստացած, բժիշկ Վէստ, երիտասարդ հեղինակ Զեսպեր Զէզ, հօրից միլիոններ ժառանգած օրիորդ Վիլյամինիա Պէջ և նորա ընկերուհի հազուագիւտ ձայնի տէր յայտնի երգչուհի Հռաքէլ Վինսլոու:

Հենրի Մէկառւէլը նրանց գէմքերին նայելիս՝ մտածում էր, թէ քանիսը նրանցից արձագանք պէտք է տան այն առաջարկութեան, որ ուզում էր անել Նա շարունակեց իւր խօսքը՝ ընտրութեամբ արտասանելով բառերը, որ ունկնդիրների վրայ այնպիսի տպաւորութիւն էր անում, որպիսին մինչև այդ ժամանակ նրանք չէին ստացել նոյն իսկ այն րոպէններին, երբ պաստորը ամենամեծ ուղեղութեամբ է խօսել: Կարծես պաստորը իւր ամեն մի խօսքը մեխում էր նրանց որտի մէջ:

— Այն, ինչ որ ես այժմ պէտք է առաջարկեմ, թող ձեզ տարօրինակ կամ անիրագործելի շմուի: Սակայն ես կասկածում եմ, որ ձեզնից շատերին այդպէս կըթուի Որպէս զի միանգամայն հասկանալի լինի իմ առաջարկը, ես կը խօսեմ ուղղակի՝ առանց այս ու այն կողմ ընկնելու: Ես հրաւիրում եմ այն անձանց ի մի խմբուելու, որոնք ազնուաբար և լրջօրէն իրենց վրայ պարտաւորութիւն կառնեն ամբողջ տարուայ ընթացքում մի քայլ չանել, առանց նախապէս իրենց հարց տալու. «Ի՞նչպէս կը վարուէր Քրիստոս այս գէպքում, եթէ իմ տեղը լինէր, արդեօք ես նրա օրինակով եմ առաջնորդւում»: և ապա ճշտիւ կատարել թէ իրեն և թէ իւր ընկերներին տուած խոստումը, առանց ուշադրութիւն դարձնելու դրանից առաջացած հետևանքներին: Ինչ խօսք, որ հէնց առաջինը ես կը միանամ այդպիսի մի խմբի: Պարզ է արդեօք

ասած Ովքեր կուղենան միանալ այդ խմբին՝ թող ժամերգութիւնից յետոյ հաւաքուին եկեղեցու գրադարանը։ Մենք այնտեղ կը խօսենք ծրագրի մանրամասնութիւնների մասին։ Մեր կանոնը այս պէտք է լինի. «Քրիստոսի հետքով։ Այլապէս ասած, մենք պէտք է աշխատենք զնալ Յիսուսի հետքով ճիշդ այնպէս, ինչպէս նա ինքը սովորեցրել է իւր աշակերտներին ընթանալ։ Եւ նրանք, որոնք իրենց վրայ են վերցնում այդ պարտականութիւնը, պարտառոր են այդպէս վարուելու մի ամրող տարի, այսօրս ուանից սկսած, առանց այլեայլութեան։

Հենրի Մէկսուէլը նորից կանգ առաւ և նայեց իւր ծխականներին։ Դժուար էր նկարագրել այն ազգեցութիւնը, որ թողել էր այդ ըստերեոյթին հաստրակ առաջը։ Քրիստոսի վարդապետութեան մի այդ տեսակ մեկնութիւն ու գործադրութիւն մինչ այդ դեռ ոչ ոքի մտքով չէր անցել։ Նրանք ամենքն էլ սովոր էին իրենց քրիստոնեայ անուանելու, երբեմն Աւետարանի մասին խօսելու, տօներին Քրիստոսի և նրա վարդապետութեան մասին քարոզ լսելու, բայց ապրել միշտ այդ վարդապետութեան համաձայն, դործ գարձնել այդ կեանքի ամեն մի դէպքում, ոչ ոքի մտքով չէր անցել ընաւ։

Մէկսուէլը մտաւ խորան և մինչ նա այնտեղ հանում էր իւր զգեստը, եկեղեցին կամաց կամաց դատարկուեց։ Նա դնաց դէպի գրադարան, որտեղ արդէն մեծ բազմութիւն էր հաւաքուած, նա չէր կարող սպասել, որ այդքան շատ անձինք կը ցանկանային յանձն առնել Քրիստոսին հետեւելու ուխտը։ Գրադարանի սենեակում հաւաքուած էին մօտ յիսուս հոգի։ Այդտեղ էին նաև Հռապէլ Վինոլու, Վերջինիա Պէջ, Նորման, Մարտ Դոնայլդ, Ալէքսանդր Պառելը, Ռիչարդ Սդոկս, բժիշկ Վէստ և Զէսպէր Զէջ։

Մէկսուէլը ծածկեց ընթերցարանի դուռը և կանգնեց հաւաքուած բազմութեան առաջ։ Նա գունատ էր, յուղմունքից շրթունքները գողում էին։

Այս Աստուծոյ դործ է, ասաց նա։ Մեզ այստեղ հաւաքել է ինքը Տէրը։ Աղօթենք նրան, որ մեզ իւր կամ-

քին հաստատ պահի և գօրացնէ մեզ իւր ցոյց տուած ճանապարհով՝ կառարեալ սիրով և մաքուր արդարութեամբ ընթանալու:

Ազօթքից յետոյ մի քանի վայրկեան լոռութիւն տիւրեց: Այենքը դլուխները խոնարհել էին: Հենրի Մէկսուէլի աչքերը արտասոուքից թաց էին: Եթէ նոյն իսկ երկնքից մի բարձը ձայն սրբագործէր Քրիստոսի հետքով ընթանալու նրանց տուած խոստումը, դարձեալ չէին կարող դրանից աւելի պարզ կերպով զգալ աստուածային օրհնութեան ներկայութիւնը:

— Անշուշտ ամենքիս համար պարզ է, թէ ինչ խոստումն ենք անում, սկսեց Մէկսուէլը: Մենք պարտաւորւում ենք մեր՝ ամենօրեայ կեանքի մէջ ամեն մի գործի սկզբում հարց տալ մեզ, թէ ի՞նչպէս կը վարուէր Քրիստոս այդ գէպը ում, առանց ուշագրութիւն դարձնելու գրանից առաջացած հետեանքներին: Մի ուրիշ անդամն կը պատմեմ ձեզ այս շաբաթուայ ընթացքում իմ կեանքի մէջ առաջացած զարմանալի փոփոխութեան մասին: Այժմ այդ չեմ կարող անել: Ես գեռ լիովին չեմ ըմբռնել իմ մէջ կատարուած այդ նոր փոփոխութիւնը: Ես այժմ այսքան միայն զգում եմ, որ այսուհետեւ այլ ես չեմ կարող ապրել այնպէս, ինչպէս մինչեւ այժմ ապրել եմ: Անցեալ շաբաթուայ ընթացքում իմ մէջ յարուցուած նոր զգացմունքները պարզեցին ինձ համար, որ ես գեռ բաւարար չափով չէի ըմբռնել Քրիստոսի աշակերտի իսկական կազմը, ուստի և պարտաւորւում եմ նոր ուխտանելու: Մէն մենակ ես չէի համարձակում այդ գործը ձեռնարկել: Հանգուցեալ խեղճ բանւորի բերանով Աստուած մեր ամենիս որտերի հետ խօսեց. այդ մի կոչ էր ամենքիս համար: Ուստի և ես նոյն առաջարկութեամբ դիմում եմ ամենքիդ: Համաձայն էք արդեօք հաստատ մնալու ձեր արած ուխտին:

— Ես համաձայն եմ, ասաց Հռաքել Վինսլոու, սակայն գեռ լաւ չեմ հասկանում որտեղից պէտք է իմանանք, թէ ի՞նչպէս կը վարուէր Յիսուս մեր փոխարէն, ով

պէտք է վճռի ինձ համար, թէ ի՞նչպէս կը վարւէր Յիսուս  
իմ կեանքի մէջ պատահած ամեն մի դէպօւմ, Այժմ չէ  
որ կեանքը բարդւել է։ Մեր ժամանակակից կեանքից  
շատ բան Փրկչի օրով դոյրութիւն չունէր, ինչպէս ու եմն  
կարող եմ ասել, թէ ինչպէս կը վարւէր նա այդպիսի  
դէպքերում։

— Իսկ ի՞նչ անեմ, եթէ մէկը իմ վարմունքի մասին  
ասէ, թէ Քրիստոս այդպէս չէր վարուիլ, հարցրեց  
Նորման։

— Եթէ խմբի անդամներից մէկը կարծէ, թէ Քրիստոս  
որոշ դէպօւմ այսպէս կը վարուէր, իսկ մի ուրիշը չհամա-  
ձայնի ընդունել ասածը, այդ ժամանակ ի՞նչը կարող է հա-  
մաձայնեցնել մեր վարմունքը։ Հնարաւորէ արդեօք մի և նոյն  
եզրկացութիւնները գուծ դնել բոլոր դէպքերում, հար-  
ցրեց Մարտ Գոնայլու։

Հենրի Մէկսուէլ փոքր ի՞նչ լուռ մնաց և ապա պա-  
տասխանեց.

— Ես չեմ կարծում, որ տեղի ունենան այդպիսի  
կառկածներ կամ տարածայնութիւններ։ Եթէ մէկը ազ-  
նուաբար, անկեղծ կերպով և գիտակցաբար հետեւում է  
Քրիստոսին, չեմ կարող ենթադրել որեիցէ կասկած ոչ  
իւր և ոչ էլ կողմնակի անձանց մտքերում։ Եթէ Յիսուս  
օրինակ եղաւ ամբողջ աշխարհի համար, հետեւապէս մենք  
ևս հնարաւորութիւն ունինք նորան հետեւելու։ Այդ-  
պէս չէ։

Ամենքը համաձայնեցին։ Մի քանի լուսէ մասնաւոր  
կերպով խորհրդածելուց յետոյ որոշուեց երկու շաբաթը մի  
անդամ կանոնաւոր ժողովներ անել Քրիստոսին հետեւլու  
ճանապարհին իրենց ունեցած փորձերը միմեանց հաղոր-  
դելու համար։ Հենրի Մէկսուէլը նորից ազօթք ասաց, և  
դարձեալ, ինչպէս առաջ, գդացուեցաւ Աստուծոյ Հոգու-  
ներկայութիւնը։ Ամենքը լուռ կերպով միմեանց ձեռք  
տուին և ցրուեցին իրենց աները խօր մտած մունքի մէջ  
ընկղմուած։